

եկեղեցունն էր հիւսիսից: Սրանց միջեւ Ասորոց եւ Ղպտի եկեղեցիների փոքրիկ վրաններն էին, դարձեալ հիւսիսից թերեւս միաբնակութեան հանգամանքի բերումով: Իւրաքանչիւր եկեղեցի պատարագում էր իր խորանում:

Հայոց Պատարագը շատ հանդիսաւոր էր ու շփեղ Ամենապատիւ Ս. Պատրիարքի հանդիսապետութեամբ, երկու Անդաստանով:

Աւանդութիւնը հաւաստում է, որ անցեալում այստեղ Ս. Պատարագի ժամանակ հրաշքով լոյս է երեւացել, եւ

հրաշքը դադարել է Սրբավայրի պղծուելուց ի վեր:

Կէսօրին Տիգրան սարկաւագ Կարապետեանի հետ անշտապ իջնում եմ դէպի Գեթսեմանի այգին, լցուած Պատարագի հոգեպարար խորհուրդներով եւ հաղորդակից բարձր, վերմարդկային դաշնութեան: Մեր խօսակցութեան նիւթը անանձնական աւանդութիւններն են իրենց աստուածային երաժշտութեամբ:

ԱՐՇԱԿ ՄԱՏՈՅԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՀՆԱԳՈՅՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏՈՒՄ

Հայաստանը որպէս քրիստոնէութիւնը պետականօրէն ընդունած առաջին երկիր, աշխարհին ներկայանում է նաեւ որպէս քրիստոնէական մշակոյթի հնագոյն օրրաններից մէկը: Ցաւօք արտի մեր երկիրն ալեկոծած պատերազմների աւերումի ու կողոպուտների պատճառով քիչ քան է պահպանել քրիստոնէութեան վաղ շրջանի մշակոյթի կոթողներից: Դարերի փորձութիւններին համեմատաբար լաւ են դիմացել եկեղեցիները, յուշասիւնները եւ պաշտամունքային այլ կոթողներ: Չնայած այն հանգամանքին որ վաղ միջնադարի հայկական եկեղեցիներն առանձնապէս հարուստ չեն զարդաքանդակներով սակայն եղած զուսպ յարդարանքում նախշազարդից բացի հանդիպում են նաեւ Քրիստոսի առաքելների եւ հրեշտակների պատկերներ, քրիստոնէութեան վաղ շրջանին բնորոշ թեմաներով պատկերաքանդակներ: Տեղումնական պատկերների քաղաքացիականութեամբ աչքի են ընկնում յատկապէս քաղաքային քանդակագործական կոթողները որ 4-7րդ դարերում բաւականին տարածուած են եղել Հայաստանում: Այդ

կոթողների վրայ վերոյիշեալ թեմաներից բացի հանդիպում են նաեւ «Աստուածամայրը մանկան հետ», Աւետման, Մկրտութեան, Տրդատի եւ Գրիգոր Լուսաւորչի պատկերաքանդակներ:

Յատկանշական է, որ ինչպէս համաքրիստոնէական մշակոյթի մէջ, այնպէս էլ վաղ միջնադարեան հայ արուեստում առանձնապատուկ տեղ են գրաւում Աստուածամօր պատկերները: Քրիստոսից յետոյ առաւել տարածուած պատկերները նուիրուած են Աստուածամօրը: Անշուշտ այս իրողութիւնն ունի դաւանաբանական հիմնաւորում: 431թ. եփեսոսի երրորդ տիեզերաժողովում Կոյս Մարիամը եկեղեցու կողմից ճանաչուեց որպէս Աստուածածին եւ հաստատուեց նրա պաշտամունքը: Հայ եկեղեցին եւս ընդունեց այդ ժողովի որոշումները: Աստուածամօր առաջին պատկերները հայ արուեստում հանդիպում են 3-7րդ դարերի պատկերաքանդակներում:

Աստուածամօրը նուիրուած են քաղաքային եկեղեցիներ, որոնցից առաջինը, ըստ պատմահայր Մովսէս Խորենացու

վկայութեան, հիմնադրել է Բարթողիմէոս առաքեալը (60-68թթ.) փարոզութեամբ Հայաստանում եղած ժամանակ: Նա Վանայ լճից հարաւ արեւմուտք հիմնադրում է Հոգեաց վանքը, կառուցում Ս. Աստուածածին եկեղեցին: Այդ վանքը յայտնի է նաեւ նրանով, որ այդտեղ է պահպանուել Յովհաննէս Աւետարանչի նկարած Աստուածամօր առաջին եւ հրաշագործ դիմապատկերը:

Ինչպէս նշուեց վերեւում, Աստուածամօր հնագոյն պատկերները պահպանուել են վաղ միջնադարեան հայկական ֆանդակագործութեան մոյճներում: Յայտնի են Թալինի, Օձունի, Հառիճի, Բերդաձորի, Կողքի, Խարաքավանքի ֆառակող ֆանդակագործ կոթողների ինչպէս նաեւ Օձունի (6րդ դ.) Պեմգաշէնի (7րդ դ.) եկեղեցիների Աստուածամօր պատկերաֆանդակները: Նշուած ժամանակաշրջանից պահպանուած յուշարձանների վրայ Աստուածամայրը հիմնականում պատկերուած է մանուկ Յիսուսը գրկին՝ կանգնած կամ գահին նստած, երբեմն նաեւ հրեշտակների հետ: Պատկերագրական այս տիպը (օգիգիտրիա) բաւականին տարածուած է եղել վաղ շրջանի արեւելաֆրիստոնէական արուեստում: Ուշագրաւ է, որ «Աստուածամայրը մանկան հետ» պատկերները մեկուսի եւ ինքնագոյ են, այլ որոշակի տեղ են գրաւում Քրիստոսի կեանքին նուիրուած թեմաների շարքում կամ էլ ներկայանում են Հայաստանում քրիստոնէութեան տարածման պատմութեանը նուիրուած պատկերների (Տրդատ, Գրիգոր Լուսաւորիչ, Խոսրովիդուխտ) խմբի մէջ:

Պատկերաֆանդակներով հարուստ յուշարձաններից մէկն է Օձունի կոթողը: Այն կանգնած է եկեղեցու հիւսիս-արեւելեան մասում: Տարբեր ուսումնասիրողներ այն վերագրում են 4-6րդ դարերին: Չորս մետր բարձրութեամբ ֆառանիստ

սիւնները վերելի մասում ամփոփուած են ֆառակուսի կտրուածով երեք մոյթերի կամարակապ ծածկով: Սիւների հիւսիսային եւ հարաւային նիստերը պատուած են զարդաֆանդակներով, իսկ արեւելեան եւ արեւմտեան կողմերին պատկերաֆանդակներ են, որոնք տեղաւորուած են եզրերը յղուած առանձին ուղղանկյունների մէջ: Հարաւային սեան մի կողմում Քրիստոսի Ամենակալ (Պանտակրատոր) պատկերն է, որից ներքեւ գոյգ-գոյգ առաքեալներն են՝ ձեռքերին գիրք. միւս երեսին Գրիգոր Լուսաւորիչ, Տրդատի, Խոսրովիդուխտի պատկերաֆանդակներն են: Քրիստոսի կեանքը ներկայացնող թեմաները տեղ են գտել հիւսիսային սեան արեւմտեան նիստի վրայ: Սեան վերնամասի վնասուած լինելու պատճառով դժուար է որոշել առաջին պատկերի բովանդակութիւնը: Յաջորդը «Աստուածամայրը մանկան հետ» պատկերն է որից ներքեւ «Աւետում», եւ «Մկրտութիւն»:

Աստուածամօր երկու այլ պատկերաֆանդակներ պահպանուել են Օձունի եկեղեցու պատի վրայ: Ուսումնասիրողները միանշանակ այն կարծիքն են յայտնել, որ ֆանդակների ֆարերը աւելի վաղ ժամանակների են եւ հետագայում են տեղաւորուել եկեղեցու պատերի մէջ: Մեզ հետաքրքրող ֆանդակներից մէկը գտնոււմ է եկեղեցու արեւելեան ճակատի պատուհանի վերելի ֆարին: Երեք մասի բաժանուած յարութեան կենտրոնում հաւասարաթեւ խաչ է ֆանդակուած, որի ձախ կողմի պատկերը անվերծանելի է, իսկ աջում «Աստուածամայրը մանկան հետ» ֆանդակն է: Բաւականին լաւ է պահպանուած եկեղեցու ներսում հիւսիսային պատի վրայ, մկրտութեան աւազանի վերեւում, կիսաշրջանաձեւ եզրագծով խորշում տեղադրուած «Աստուածամայրը մանկան հետ» հարթաֆանդակը: Գահին նստած Աստուածամօր գոգին, ձախ կողմում,

մանուկ Յիսուսն է: Երկար, ծանր ծալքերով ներքեւ իջնող թիկնոցը ծածկում է նրանց մարմինները, երեւում են միայն Աստուածամօր ոտնամանների ծայրը եւ մանկանը գրկած ձեռքերը: Դիմահայեաց պատկերուած ֆիգուրները հանդիսաւոր եւ տպաւորիչ են: Դէմքի մշակման նրբութեամբ եւ արտայայտչականութեամբ առանձնանում է յատկապէս մանուկ Յիսուսի պատկերը: Նրա ձուածեւ դէմքի վրայ ընդգծուած են լայն բացուած աչքերը հեռուն ուղղուած հայացքով, կարն կտրուած մագերի գանգուրներն ամփոփում են լուսապսակի ընդգծուած շրջագծով: «Աստուածամայրը մանկան հետ» պատկերագրական այս տարբերակը լայն տարածում է գտել հետագայ դարերի հայ արուեստում: Մասնաւորապէս Աղթամարի Ս. Խաչի, Նորավանքի, Սպիտակաւորի յարդարանքում մանրանկարչութեան, հետագայում նաեւ գեղանկարչութեան մէջ:

Գահակալ Աստուածամօր պատկերագրական հետաքրքիր տարբերակ է պահպանուել Թալինի մի կոթողի պատուանդանի վրայ: Գահին նստած, մանուկ Յիսուսը գրկին, Աստուածամօր երկու կողմերում հրեշտակներ են կանգնած եւ լայն բացուած թւերով ասես կամար են կապել նրանց գլխավերեւում: Աստուածամայրը հովանաւոր, հրեշտակների հետ պատկերուած է նաեւ Պեմզաշէնի եկեղեցու արեւմտեան մուտքի սալաքարի վրայ, այն տարբերութեամբ միայն, որ այստեղ նա կանգնած է եւ երկու կողմերում սաւառնող հրեշտակներ են, որոնցից ներքեւ աւելի փոքր չափերով մէկական ֆիգուր է փանդակուած:

Թալինի մէկ այլ փառանիստ կոթողի մի երեսին Աստուածամայրն է մանկան հետ, իսկ վերեւում, առանձին ուղղանկեան մէջ, պատկերուած է Գաբրիէլ հրեշտակապետը:

4-7րդ դարերից պահպանուած

տարբեր կոթողներ «Աստուածամայրը մանկան հետ» պատկերափանդակները կատարողական ձեւերով եւ ռեալական առանձնայատկութիւններով հանդերձ ունեն շատ ընդհանրութիւններ: Ֆիգուրները հիմնականում պատկերւում են դիմահայեաց, մօր եւ մանկան ոգեշնչուած դէմքերի վրայ, լայն բացուած, խոշոր քիթերով աչքեր են հայեացքն ուղղած դէպի հեռուն: Հորիզոնական ուղղահայեաց, թեք գծերի յաջորդականութիւնը որոշակի ռիթմ եւ դրամատիզմ է հաղորդում կերպարներին: Աստուածամայրը դիտուել է որպէս միջնորդ խնդրարկու Աստծու առաջ եւ այդ կոչումի մարմնաւորումը վաղ միջնադարեան հայ արուեստի յուշարձաններում դրսեւորւում է նրա կերպարի վեհաշուք մոնումենտալ հանդիսաւորութեան ընդգծուած հանգիստ վիճակի եւ ներքին հոգեկան լարուածութեան հակադրութեամբ:

Վաղ միջնադարեան հայ արուեստի յուշարձանները մեզ համար կարեւորում են նաեւ նրանով որ տէրունական պատկերների բազմազանութիւնը, պատկերագրական տիպերի որոշակիութիւնը եւ կատարողական ձեւերի ամբողջականութիւնը ներկայացնում են պատկերագրական սխեմաների կազմաւորման պրոցեսը որի ընթացքում ձեւաւորուած աւանդները շարունակեցին գոյատեւել եւ զարգանալ հետագայ դարերի հայ արուեստում, ինչպէս փանդակագործութեան, այնպէս էլ որմնանկարչութեան եւ գեղանկարչութեան մէջ:

ՔՆԱՐԻԿ ԱԻԵՏԻՍԵԱՆ